

Կովկասի Տ. Փոխարքան ուղղել է Վեհափառին հետևեալ պատասխան հեռագիրը.


Նորին Սրբութեան Ամենայն Հայոց Կաթողիկոսին.

էջմիածին, 8 դեկտեմբերի

Կինս և ես խնդրում ենք Ձերդ Սրբութեան ընդունել մեր սրտագին շնորհակալութիւնը սիրալիր ողջոյնի և բարեացակամ աղօթքների համար:

ԳԵՆԵՐԱԼ ԱԴԻԻՏԱՆՏ

ԿՈՄՍ ՎԱՐԱՆՑՈՎ, ԴԱՇԿՈՎ



ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻԻՆՆԵՐԻՑ.

Դիւանի շրջաբերական գրութիւններ Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիայի, Աստրախանի և Շամախու Հայոց առաջնորդների, Երևանի փոխ-թեմակալի և Ղարաբաղի թեմի ժամ. կառավարչի անունով, որով յանձնարարուեց յայտնել իրենց թեմերում գտնուած Տաճկահպատակ հայերին, որ Կովկասի Տ. Փոխարքան՝ Նորին Վեհափառութեան միջնորդութեան համաձայն, կարգադրել է, որ փոխարքայութեան սահմաններում եղած Տաճկահպատակ հայերն ազատ են մնալու Ռուս-տաճկական պատերազմի ընթացքում, իսկ Ռուսաստանում եղած Տաճկահպատակ հայերի ազատութեան համար Փոխարքան ղիմել է Պետրոգրադի բարձր իշխանութեան, որից, հաւանականաբար, շուտով բաւարար կարգադրութիւն կատարուի: 6 նոյեմբերի, թ. թ. 1712—1716:

Նորին Սրբութեան մակադրութիւն Մ. Տաճարի Լուսարարապետի անունով. «Պատուիրում ենք Մայր Տաճարի Լուսարարապետ զերապատիւ Տ. Անոնդ եպիսկոպոսին տալ ճեմարանի Զ. դասարանի աշակերտ Բենիամին Մանասեանին, Հայկ Դուկասեանին և Միսակ Տէր Վարդանեանին ուրար»: 7 նոյեմբերի, թ. 1718:

Կոնդակ Կալկաթայի Հայոց եկեղեցու կառավարիչներին անուանով, որի մէջ նկարագրելով Տաճկահայ ժողովրդի այժմեան ճգնաժամ դրութիւնն ու ծանր պայմանները, Վեհափառ Հայրապետը յորդորում է օգնել այն թշուառացածներին, որոնք ներկայ Ռուս-տաճկական պատերազմի պատճառով տնտեսապէս քայքայուել, հիւժուել և գտնուում են ծանր կացութեան մէջ: 11 նոյեմբ., թ. 1729:

Կանգալներ նոյն մտքով Ռանգունի, Սինգափուրի և Զաւայի Սուրբայեա ու Բաթաւիա քաղաքների Հայոց եկեղեցիների կառավարիչներին ու վարչութեան անուանով: 11 նոյեմբերի, թ. թ. 1730—1732:

Կոնդակներ նոյն մտքով Պարսկա-Հնդկաստանի Հայոց առաջնորդական խորհրդարանի և Ամերիկայի Հայոց թեմի առաջնորդ բարձրապ. Տ. Արսէն ծ. վարդապետ Վեհու-նու անուանով: 11 նոյեմբ., թ. թ. 1733—1734:

Կոնդակ օրհնութեան հանգուցեալ Կաբրիէլ Տարասեանի կտակակատարներ՝ պ. պ. Ասլան և Գէորգ Տարասեանների անուանով՝ իրենց պարտականութիւնը ճշտութեամբ կատարելու առթիւ (փոխադրել են Սինօղի անուանով Գ. Ճեմարանի օգտին կտակած 6000 ռուբ. գումարը): 12 նոյեմբերի, թ. 1744:

Կոնդակ Ղարաբաղի Հայոց թեմի ժամանակաւոր կառավարիչ Տ. Զաւէն վարդապետի անուանով, որով հաստատուեց Շուշու Կուսանաց վանքում պ. Արսէն Կրասիլնիկեանի հաշուով բացուած եկեղեցական-ձխական դպրոցը և առաջադրեց այսուհետեւ կոչել «Սոֆիա Կրասիլնիկեան եկեղեցական-ձխական դպրոց»: (Սոֆիան պ. Կրասիլնիկեանի հանգուցեալ քոյրն է, որի յիշատակը յաւերժացնելու համար բացուած է յիշեալ դպրոցը): 12 նոյեմբ., թ. 1745:

Կոնդակ օրհնութեան և զոհունակութեան պ. Արսէն Կրասիլնիկեանի անուանով՝ իւր հաշուով Շուշու Կուսանաց վանքի գաւթում եկեղեցական-ձխական դպրոց բանալու առթիւ ի յիշատակ իւր քրոջ հանգուցեալ Սոֆիայի: 12 նոյեմբերի, թ. 1749:



Կոնդակ Երևանի փոխ-թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսի  
 և Վրաստանի Հայոց թեմի առաջնորդ Տ. Մեսրոպ եպիս-  
 կոպոսի անուհով, որով առաջագրուեց անյապաղ գնալ  
 պ. պ. Յովսէփ Խունուհցի, Շիրվանղաղէի, Յովհաննէս Թու-  
 մանեանի և Սմբատ Խաչատրեանի ընկերակցութեամբ  
 Ռուս-տաճկական պատերազմի դաշտը՝ նախ՝ յայտնել զօրքի  
 հրամանատարներին Նորին Վեհափառութեան օրհնութիւնն  
 ու բարեմաղթութիւնները, երկրորդ՝ զօրաբանակն այցելե-  
 լու ժամանակ յարմարաւոր տեղում կատարել Կայսերական  
 մաղթանք, օրհնելով զօրականներին ու զօրքին, երրորդ՝  
 յորդորել բոլոր հայ զինուորներին և կամաւորներին՝ լինել  
 միշտ պարտաճանաչ, լաւ և օրինակելի բոլոր գործերում,  
 ինչպէս մինչև այժմ, չորրորդ՝ քննել Ռուսաց տիրած մա-  
 սի հայ գիւղական ժողովրդի վիճակն և նրանց կրօնական  
 բարոյական և անտեսական կացութեան մասին մանրա-  
 մասն տեղեկութիւն ժողովել. և, հինգերորդ՝ ուսումնասի-  
 րել հայոց ազգային կրօնական ու Աստուածահաճոյ հաս-  
 տատութիւնների, կալուածների վիճակը. նաև նոյն շրջանի  
 հայ հոգևորականութեան մասին տեղեկութիւն քաղել,  
 պատուիրելով վերջնիս միշտ մխիթարել հոգեպէս և բա-  
 րոյապէս հայ ժողովրդին, որ ծանր կացութեան մէջ է:  
 Շրջագայութիւնից յետոյ մանրամասն զեկուցագիր ներ-  
 կայացնել Նորին Վեհափառութեան, 15 նոյեմբերի, թ. թ.  
 1750, 1751:

Կոնդակ Վրաստանի թեմի Ախալքալախի գաւառի  
 Աբուլ գիւղի ծխական հոգաբարձութեան անուհով, որով  
 հաստատուեց նոյն գիւղում բացուած եկեղեցական-ծխական  
 դպրոցը: 17 նոյեմբերի, թ. 1753: